

ՀԱՅՈՒԹ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ

~~~~~

Եհա՛մի ժողովուրդ, մի ազգ, մարդկայնութեան մի անջատ խումբ, որ իրերի բնական ընթացքով մարտի դաշտն է դուրս մղուել և վըճռել իւր վերջին արեան գնով ձեռք բերելու, ըստեղծելու իրեն համար գոյութեան այնպիսի նոր պայմաններ, որոնք պատշաճ լինեին արդարութեան, մարդկային անբռնաբարելի իրաւանց գէմթ ամենատարբական գաղափարին։ Եհա՛և ասիսկան մի բռնապետութիւն, կատաղի մի գագան, որ փըրփըրած հայկական ովկիանոսի ալիքներից սպառնում է իւր ծանրութեան տակ փշել, խորտակել այդ ապստամբ զօրութիւնը, որ յանդըդնում է իրեն համար վերեկց գծուած կեանքի շըրջանակից գուրս գալու և ստրուկ արարածներից ազատ, անկախ, հաւասար մարդիկ առաջ բերելու։ Եւ ահա այդ ժամանակ, երբ այդ երկու անհաւասար ոյժերը իրարու դէմ են ծակատած և մի օր անպատճառ պիտի բաղնին, դու ի՞նչ ես մտածում, հայ երիտասարդ, ինչի՞ մէջ ես ուզում տեսնել քո դերդ, ի՞նչ՝ կեանքիդ խորհուրդը։ Մի մոռացիր որ քո վիրաւորուած, խոցոսուուած, բայց գեռ կենդանի, լիաթոք չնչող ազդիդ յառաջապահ երիտասարդներից շատերը այսօր այլ ևս չկան։ Նրանք արիութեամբ կատարեցին իրենց նուիրական պարտականութիւնը և չխնայեցին իրենց կեանքը իսկ զոհ բերելու Ա. Գործին՝ ո՞ր կախաղան բարձրանալով, ո՞ր բանտերի տամկութեան մէջ մաշուելով, ո՞ր թշնամու սրին զոհուելով։ Զկան այլես նրանք և պարտականութեան այդ զոհերի թողած տեղու գեռ բաց է, բաց։ Ո՞վ պիտի լինի նրանց արժանաւոր յաջորդը։ «Կեցցեն ազատ Հայաստան», «Կեցցեն Յեղափոխութիւն», այս եղաւ նրանց սրտահերձ վերջին կոչը, միթէ այդ ձայների ալիքները ականջդ չհասան։ Հանդա՞րս է իսիդդ, ներքին աշխարհդ չի վրդովում, զգացմունքներդ չի ըմբոստանում և ժամանակութեան մէջ մաշուելու, ուղղում դէպի այն երկիրը, ուրտեղից այդ ձայնը արձակուեցաւ։ Մի մոռացիր և այն, որ հետզետէ աւելի խոշոր տառերով առաջդ է պատկերանում «Այժմ, կամ Երբէք» երկառածը և քաղաքական աշխարհը յուշ

գող խնդիրների բնաւորութիւնն էլ այդ միենոյնը հաստատում։ Երդ, այս ծանր պարագային դունչ ես մտածում, որոշել ես քո զիրքդ, կանգնել ես քո պարտականութեանդ բարձրութեան վրայ և ամէն պատահականութեան առաջ պատրաստուել։ Նայիր, գեռ ո՞չ մի ժամանակ զիրտութիւնը, մարդկային խելքի անպարագրելի թըրութիւնը, այնպէս օգնութեան չը հասած թոյլին, փոքրին ընդդէմ անարդար զօրեղին, յօշոտող մեծին, որքան որ այժմ։ Նա տկարի անդաւածան սազուկն է զարձել և նրան ամէն միջոց տուել քանդելու, խորտակելու, ոյժ երեան բերելու ու իւր իրաւունքը յաղթանակել տալու։ Այդ զիրտութեամբն էլ դու արդէն զինուած ես, ուրեմն ի՞նչ է մտածմունքդ։

Երգեօք առաջդ արձանացած ինչդի բարդութիւնը տեսնելով՝ դու վեհերոտում, տատանւում ես և քեզ թոյլ, անկարող զգալով կուտակուած դժուարութիւնները հարթելու, դու նախամեծար ես համարում հեգնել ամէն ինչ, դառնալ մի Վզօլթէռ և «Լաւագոյն համարել սեպհական պարտէ զդ մշակելու»։ Հետեւաբար ցանկանում ես վայելել, բաւականանալ միայն կեանքի այն պայմաններով, որ քեզ համար դժել են, քեզ չնորհել են։ — Ասկայն, երիտասարդ, դրանով դու քեզ չի՞ս դատապարտում և կոչմանդ դաւաճանում, զի կեանքի այն շրջադիմը որով դու ուզում ես բաւականանալ, ձեռք չի բերուած մարդկային անթիւ զոհերով։ Նրանք էլ մարդ, երիտասարդ էին, բայց նրանք չուզեցին մընալ մարդկային արժանապատութիւնը ստորացընող մի դրութեան մէջ։ Իրականութեան մտակարարած անարդարութիւնները, ընկերոջ, մերձաւորի սէրը նրանց վրայ պարտականութիւն դըրեց ըմբոստանալ, թողնել ամէն հանգստութիւն, ամէն վայելք և պայքարի դաշտը դուրս գալ։ Եւ պարտականութեան այդ անվեհեր զինուորների խոցել, խոցուիլ և պատւոյ դաշտի մէջ ընկնիլն է, որ քեզ տուել է կեանքի այն պայմանները, որով դու ուզում ես հերիքանալ։ Երդ, գեղ իրաւունք ես տալիս ուրիշի արեան զինը վայելելու, ուրիշի աշխատանքը ուտելու, միշտ այն ժամանակ երկառածը և քաղաքական աշխարհը յուշ

սափիլ։ Վո ամբարած գիտութիւնդ, քո միջավայրդ քեզ դէմ չի բողոքիլ և պարտէզը մըշակողիդ արհամարհիլ, երբ դնու քեզ հանգատութեան պայմաններ տուող խողիողուած քաջերի յաջորդները աչքիդ առաջ շարունակում են իրենց նախորդների անողոք կոիւը և պիտի շարունակեն էլ, մինչև որ վերանայ մարդկային շահագործումը մարդից։

— Խւր գոյութիւնը մուրացածոյ հիմունքների վրայ գնել, ամբողջ էութեամբ ստրկանալ, անձնատուր լինիլ կետնիքի հածոյըներին, սեպհական անձի բարորութիւնը և դիւրակեցութիւնը միայն իրեն նպատակ անել — սա նշանաբա՞ն կարող է լինիլ մի պարտածանաչ հայ երիտասարդի։

Ենհատական առաւելութիւններ փնտուել, եսասիրութիւնը իրեն ուղեգիծ անել, միայն իրեն շահագրգոռող շարժառիթներին հնազանդիլ և ըստացած գիտութիւնը անձնական երջանկութեան միջոց դարձնել — սա երիտասարդի իրէա՞լ է։

Խո՞յս տալ ճակատամարտից, վերջոտնի՞ դըժուար խնդրի առաջ, երբ անդին հարիւր հազարտորներ գերեզման են իջած և մի ամբողջ երկիր գերեզմանատուն դառնալսւ վրայ է։ Մի՞թէ հայ երիտասարդը այդ աստիճան ընկած, անպատուախնդիր և խոտասիրու է։

Ենտարբեր, չէզո՞ք մնալ, երբ մի ամբողջ ժողովուրդ անպատճ կողովուում, հարստահարւում, արեան մէջ է լողում։ Ենշարժ, անգո՞րծ նատիլ, ա՞չք փակել չայի ցաւի աւած և վէրը առնելուց երկի՞ւղ կրել հենց այն ժամանակ, երբ մեզ խղացող օտարներն իսկ մեզնից ո՞յժ, ո՞յժ են պահանջում։ Դու, երիտասարդ, մի՞թէ այդ աստիճան ոճրագործ կարող ես լինել։

Զէ։

— Եզդիդ, ընկերոջդ վեճակը քեզ վրայ սըրբազան պարտականութիւն է գնում, երիտասարդ, որ յառաջ մղուիս, ձեռքդ առնես թոյլի, շահագործուողի դատը և քո շտեմարանած դիտութիւնիցդ օգտուելով՝ կեանքդ միայն միջոց համարես առաջդ բարձրացած խութերը ոչնչացնելու։ դըժուարութեանց աղքիւրը իսկ վեր ենես և քո բոլոր էութեամբ, երիտասարդական թափովդ ասպարէզ մտնես և զրկուողի իրաւունքը պահանջես։ Մի մարտիրոս ժողովորդի ազատութեան բարդ խընդիլն է սեղանի վրան դրուած, դա քեզ նիւթ է մտածելու, քննութեան առնելու և շարժականութեան մէջ մտնելու, որպէսզի դու էլ նրա լուծմանը նպաստես, աջակցես և այդպիսով քո կոչմանդ բարձրութեան վրայ կանգնես։ Վո պարտականութիւնն է ամէն ճիգ թափել, պայշարել, որպէսզի յառաջանայ իրերի մի այնպիսի նոր դրութիւն, ուր երջանկութիւնը, բարձրութիւնը ընդհան-

րական լինի բոլոր հայերին, որ նա էլ ունենայ բոլոր բանական էակներին արժանի մի քաղաքական և ընկերային վիճակ։

Եմէն հանգամանք պարզ կերպով ցոյց է տալիս, և մենք էլ միանգամ ընդ միշտ համոզուած պիտի լինինք, որ եթէ ուզում ենք ապրիլ իրեւմարդ, տապա մենք ինքներս միայն պէտք է աշխատենք մեր սեպհական փրկութեան համար։ մեր յոյսը ամենէն առաջ մեր և մեր բազկի վրայ պիտի զնենք, եթէ ոչ՝ կորա՞ծ ենք, կորա՞ծ։

Խւրաքանչիւր ոք շատ մտածեց իրեն վրայ, շատ աշխատեց սողալ և իրեն միջավայրին յարմարիլ, ջանք ունեցաւ միայն իրեն համար առատ բաժին հանել բնութեան վայելքներից, չուզեց ձանաչել, տեսնել իւր բազմաչարչար ընկերոջ տուայտանքը, չկամեցաւ նրան օգնութեան թռչել — և ահա մեր այդ ինքնասիրութիւնը ընդհանուր դըժբախտութեան, ընդհանուր թշուառութեան պատճառ դարձաւ։ Մինք խուսափեցինք մեր պարտականութիւնից գէպի Եզդ, Հայրենիք, մի տանջուող ժողովուրդ — և ահա մենք կորստեան անդունդի գուռը։ Եւ այս մինչեւ ե՞րբ։

Մեռելները պէտք է իրենց մեռելները թաղեն։ բայց այդ քեզ համար չէ, հայ երիտասարդ։ Եթէ վայելընութիւնը, դիւրակեցութիւնը, անձի հանգընտութիւնը կեանքի նպատակ լինէր և մարդսրաւականանար միայն իւր սեպհական երջանկութիւնը փնտուելով, տապա հարկ չկար որ նա ունենար բանականութիւն, զի անասունի անսխալ բնազդումն էլ զրա համար նրան հերիք պիտի լինէր։

Մարդկայնութեան ամէն անջատ խումբ իրեն պայքարող երիտասարդութիւնը ունի, որ իրեն կեանքի աղն է կաղմում և մարդկային յառաջազիմութեան առաջին շարժիչ զսպանակը։ Շատ քիչ աղդ կայ որ այնքան ոտքի տակ գնացած լինի, որքան Հայը և ահա այդ թշուառ, մարդկային նախնական իրաւունքներից զուրկ ազդի փրակութեան դործն է, որ քեզ է կանչում և քեզ վրայ սրբազան պարտականութիւն գնում մարտի գաշտը դուրս գալու։ Ուրեմն, եթէ գիտակցութիւն ունիս, շտապի՞ր կատարել պարտականութիւնը, որովհետեւ պարտականութիւն է, առանց որ և է վարձատրութեան, առսնց անձնական շահի որ և է ակնկալութեան։ Ծնկերոջդ, ազգիդ ազատութիւնը և երջանկութիւնը քեզ՝ իդէալ։ մաքուր, անշահախնդիր բարյոյականութիւնը քեզ՝ գործիք և դու պիտի լինիս ուրիշների մէջ զազափարի, սրտի, մեծահոգութեան տաքութիւններնչողը, անտարբեր, անդիտակիցներին գէպի գործը բոցավառողը։

Դու առաջնը քո անձնական օրինակովը պիտի հաստատես, որ ժամանակը հասել է, երբ ամէն

հայ բարձրաձայն իւր վճիռը պիտի տայ և պատրաստ լինի ընդհանուր թշնամուն դիմագրաւելու որպ ս թէ ինքը մինակ լինէր: Արմաչի, կամ մարտընչիլ, ահա օրհասական երկառածը, իւր րոպէն վճռական է:

— Անհաւասար ոյժերի առաջին բաղիսումից հայր այսօր ծանր վիրաւորուած է, սակայն թափած արեան հեղեղ նրան չէ սարսափեցրել, չէ կարողացել վերջունել տալ իւր իրաւունքից: Դառ նա կանգուն է և յամառօրէն կառչած իւր գաղափարին. նա հաւատացած ու համոզուած է, որ իւր ծոցի մշջ նիւթական և բարոյական այնքան ոյժ ունի, որ կարող պիտի լինի իւր արդար դասը վերջ իւր վերջոյ յաղթանակել տալ:

Եսդ արինաթաթաւ և իւր ազատութեան սիրով վառուած ժողովուրդն է ահա որ քեզ է ըսպատում, հայ երիտասարդ, որպէսզի վաղընդփոյթ ասպարէզ մտնես և իւր ցրուած, անկերպարան ոյժերը կազմակերպես, կանոնաւորես ու վեհագոյն բոպէին իւր խրախուսիչ ոգին դառնաս:

Հայ երիտասարդ, կատարիր պարտականութիւնդ, նա սուրբ է:

#### ՆԱՄԱԿ Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐԻՑ

ապրիլ 12, 1900

Խոստացած էի մեր կրած հարստահարութիւններու և անլուր տառապանքներու մասին տեղեկութիւններ տալ: Ահաւասիկ:

— 95 - ի աղէտալի կոտորածի ժամանակ, բնիկ գարահիսարցի Մանուկ Էթմէքձեանը քրթանոս հայաշատ գիղէն քաղաքս եկած տաեն՝ ճամբան կըսպաննուի թուրը խուժանէն իւր ընկեր գառնիկ անուն հայ երիտասարդին հետ մէկտեղ, երբ այդ գիղին տասանորդը առած և ցորենը ուղարկու վրայ բեռցած կրերէր: Քննութիւնը ցոյց տուեց և հաստատեց վաղօրօք արդէն յայտնի այն ճշմարտութիւնը, որ կողապտուած ցորենը ուղղակի տարուած էր պէլէտիելի ն ախագա թասիմի տունը և հոն ալ վարդրուած: Քիչ մը ժամանակ անցնելէն յետոյ, երբ տասսանորդի պարտը կառավարութենէն կուզուի. սպանուող Մանուկի որբերու կողմէն իրողութիւնը Պօլիս հիեռագրուի: Ներքին գործոց նախարարութիւնը իրողութիւններին գիտակից լինելով՝ կհրամայէ որ տասանորդի ստակը ցորենի կողոպտողէն գանձուի: Այս հըրամանին վրայ, խնդիրը յետածուեր էր: Հիմա այդ միւսնոյն խնդիրը տեղական կառավարութեան կողմէն նորգուելով, նոյն որբերու արտ և պարտէզ աճուրդի հանուած են ծախելու և տասսանորդի պարտուց հաշիւը գոցելու, հակառակ ներքին գործոց նախարարի հըրամանին: Ահա աւաղակ կառավարութիւնը մը, որ նախարարական հրաման մը իսկ բանի տեղ չգներ, երբ խընդիրը հայերը կեղեբելու համար է:

Գիղերու մշջ նմանը չտեսնուած խստութեամբ և անիրաւութեամբ տուրբերը կանձուին, թէւ 98 և 99 - ը տարիներու զինուրական տուրբերու համար

Համ - Իթական հրաման ելած էր որ չառնուին, բայց խորեայ կառավարութիւնը հիմա մարդ հանելով գիւղերը, բանի կդանձէ որչափ որ կարելի է: Որովհետեւ մինչեւ 95 - ի ընդհանուր կոտորածը ամբողջ Աշխար - Օվայի հայ ժողովուրդը վճարած տուրբերու պաշտօնական ընկալագիրը ունենալով՝ կրնար անոնցմով իւր իրաւունքները պաշտպանելու մասին անոնցմով է: Իրաւունքները պաշտպանելու մասին անոր գիւղերու մը ամբողջ գոյրերով և տուրբերով: Այսուհետեւ քմածին նոր տուրբ կպատրաստեն, կոկին հայերը խիստ կերպով նեղել, գաշտի մէկ ծայրէն միւսը և հին, իրը թէ, մնացորդ տուրբերը պահանջել: Խեղճ գիղացիները շուարեր մնացեր են, ինչ ընեն. անգամ մը վճարած են արդէն այդ տուրբերն, բայց իրնեց բոված նոր գոյրերը չունենալով, որ անոնցմով կառուղի անոր գիւղերու մը կառուցին անոնցմով է: Այս ամբունք անունով գաժան անձը կրոկէ գիղերը: Այս ամրգուն պաշտօնն է խեղճ գիղացիներէն տուրբերը գանձել՝ ինչ կերպով ալ որ ըլլայ, մինչեւ իսկ արդէն տրուած և վճարուածներն ալ, 100 - ին 30 ը իրեն վարդներով՝ կառավարութեան որոշման համաձայն: Այս արինիսում հարստահարիչը իւր պաշտօնը շատ հաւատարմութեամբ և անձնութիւններու մէկ կառավարէ — բըռնութեամբ և ծեծով, հայհայնքով և նախատինքով կը քաշէ հայ գիղացիներու տուննեն, գոմէն և ախոռէն ինչ որ կդանէ՝ կոլ, եղ, եշ, ձի, գոմէշ, ոչխար են. իզուր թշուառ գիղացիները կոլան, կազոռան կկանչեն թէ իրենը վճարած են այդ ուղած տուրբերը և ընկալագիրը կողապուտին և կոտորածին ժամանակ կորսուած են. մտիկ լնող չկայ, ծեծով, փայտով կը քաշէ գաղանաբարու պաշտօնեան ամէն ինչ, որ ձեռքը կանցնէ, կծախէ ամենաչնչին գներով՝ ծ զուրուշնոցը մէկ զուրուշի տալով. մինչեւ իսկ գոյց գուռները կոտրելով կմտնէ և տուներուն մէջ գտածը առնելով կլեցնէ և այն կերպով կծախէ. ամէն աղքատին հետ ալ այդ կերպով կվարուին: Այդպիսով հայերը մոխրի վրայ նատեցնել և բոլորովին մուրացկան գարմնել է կառավարութեան միտքը: Այս գրածս կը հաստատէ Համ - Իթի մէկ նոր իրադէն, որ զինուուրական նոր պէտքեր հայթայթելու համար, կհրամայէ ոչխարի, այծի, ուղտի են. տասանորդի վրայ 100 - ին 6 նոր տուրբ աւելացնել: Համ - Իթը կըսէ թէ այս կարգագրութիւնը ժամանակաւոր է, սակայն՝ որ ժամանակաւոր բառի նշանակութիւնը թրբական բառաւանի մշջ մշտական է, այդ գիտենք արդէն, զի նման օրինակներ շատ ունինք:

(Օվայի զանազան կողմերը տեղական կառավարութիւններէն զատ աւելի ազդեցիկ կառավարութիւն ալ կայ — աղոնք տեղական պէտքերն են, որոնք ժողովորդի գլխուն վրայ կառուած տուրեր են, օրինակի համար ինտիրէսի մշջ, նշանաւոր Մէհմէտ Ալի էֆէնտին, որ տեղական ամէն գործի և խնդրի մշջ անպատճառ մատունի, այդ մարդը հայ ժողովորդի առաջնակ կեղեբելու համար: Գիղերու մշջ նմանը չտեսնուած խստութեամբ և անիրաւութեամբ տուրբերը կանձուին, թէւ 98 և 99 - ը տարիներու զինուրական տուրբերու համար 95 - ի անլուր

կոտորածէն սարսափահար մի հայ՝ Ստեփան Փարթալեան, բնիկ անդրէասցի, նման օրինակ գէպքերւո առաջ գէթ անպատճաստ չգտնուելու համար, իւր տան մէջ կշնէ, հազիւ 10 - 15 մարդ պարունակող, մի գետնափոր նը-կուղ, որու մասին լուր կառնէ իւր դրացի Վարդերէս Դանիէլեան անուն վատ հայն և իսկոյն կիմացնէ հայ-փոլիսին (Մկրտիչ Յովակիմեան, Սեբաստիոյ Ղալտը գիւղէն), առ ալ իւր կարգին չափաղանցելով՝ կմատնէ կառավարութեան: 99 հոկ. 15 - ին կրանտարկուին Ստեփան և իւր հինգ որդիք: Շատ չարչարանքից յետոյ անխիղճ կառավարութիւնը մի քիլա ցորեն կաշառով պիտի արձակէր, եթէ բանտարկեալները ընդունէին. բայց շուն Մէհմէտ Ալի էֆէնտին՝ կաշառի մեծ բաժին մը իրեն հանելու նպատակով՝ խնդրոյն քաղաքական գոյն տալով միւմէսարդին լուր կհասցնէ, որ իւր կարգին կաշխատի խիստ կերպով պատժել խել-ձերը: Ինչո՞ւ: — Որովհերև խորհած էին իրենց գոյութիւնը պահպանել. սակայն ամէն կողմէ անելանելի կացութիւնը տեսնելով՝ խեղճ բանտարկեալները կրստիպուին 70 ոսկոյ կոր գումար մը կաշառք տալ, ո-րու 17 ոսկին շուն Մէհմէտ Ալիի բաժինը կհասնի, և այդպիսով կազատուին առայժմ: Պէտք է գիտնալ որ խեղճ զոհերը դրամ չունեին, ուստի իրենց ընտանեաց պարէնն հայթայթով մի քանի արտեր ծախելով ձեռք բերին այդ գումար: Արդէն հայն արտ կամ հող առնող չէ, անոր հողերը կանցնին թուրքերին և ինքը միայն արտատուաթոր ականատես կըլլայ ու կմըդ-կըտոյ:

Կառավարութիւնն աշարի (տասանորդ) համար հայու հողն կծախէ, իսկ թուրքին բնաւ բան չկայ: Ա-զիզ էֆէնտին այսօր ունի 800 ոսկոյ չափ պարտք կառավարութեան աշարի փոխան, ատոր համար ոչ թէ անոր ապրանքը պէտք է վաճառուեր, այլ նորա տեղ պիտի ծախուէր անոր ընկեր Պաշը Պէյիկեան նշանի հողը, եթէ սա սակայն իւր պարտուց քանի պատիկը վճարելով՝ հողերը ազատելու չաշխատէր, չէ որ ան թուրք էր, իսկ սա հայ: Ուրիշ բան մն ալ կայ, երբ հայու մը հողը ծախուի մունետիկը հայոց թաղը չգար պոռալու, այլ թրբաց, որոնք գաղտագոյի կառնուն աժան կերպով արժէքաւոր հողեր: Այս եղելութեանց համար շատեր կհաւաքուին և հեռագիր կուտան կուսակարին, բայց արգեօք հեռագրերն կուսակալին կը համնին — այդ խնդիրը մութին մէջն է, զի հեռագր-բատան պաշտօնեան կպահէ այդ տեսակ հեռագրերն, հետեւաբար անկարելի է կառավարութեան աննապաստ գիր կամ հեռագիր զրկել վերին տեսչութեանց. թող որ վերին տեսչութեանց առջևն ալ հայու բողոքը ան-լոսելի կմա:

Երկրագործական Պանքը որ, իբրև թէ, ինպաստ երկրագործին հառտատուած էր, այսօր հայ երկրագործին հողը յափշտակելու ամենալաւ միջոց մ' եղած է: Այս ընթացքով մօտիկ ապագայում հայը իւր ունե-ցած պատառ մը հողէն ալ իսպառ պիտի զրկուի:

Այս օրեր մզկիթներու մէջ վազ (քարող) տը-ռուեր է այն բովանդակութեամբ, որ իսլամ եղողները քրիստոնեաներէ առևտուր չընեն: Թուրքերու մէջէն ալ այս մօտիկ ժամանակներս հայերուն առաջարկներ ե-ղած են, ըսի լով թէ՝ մզկի ծախեցէր ձեր ունեցած կալուածները և հողերը, 100 ոսկիի արժողութեամբը 40 - 50 ոսկիի, եթէ չծախսէր, քիչ ատենէն պիտի ըս տիպուիր ամէն ինչ ձրի մզկի տալ: Կարծես թէ հա-

րըստահարուողը, կողոպտուողը, կոտորուող — տպան-նըուողը թուրքն է եղեր և հայն ալ կողոպուտ կատա-րողը, որ ամէն օր կմուածեն հայութէնէ վրէժ լրւ-ծել, նորէն ջարդելով կողոպտելով: Իսկ հայութեան մի մասը այս բոլորի հանգէպ գժբախտաբար սառն անտարբերութիւն ցոյց կուտայ, նա կարծես թէ մոռ-ցել է դեռ երէկուայ 95 - ի սոսկալի կոտորածը, մա-նաւանդ հարուստ գասակարգը:

Ժամանակ չէ որ ամէն ստրկամտութիւն մի կողմ թունենը և մեր արդարադատութիւնը, մեր տառապանք-ներու սպեղանին մեզմէ, մեր զէնքէն սպասենը: Հա-րուստ դասակարգը այդքան շնուռ մոռցաւ, որ թշնա-մու սուրբ խորութիւն չգրե, իւր և իւր աղքատ հա-րեւան ազգակցի միջւ: Երբէք մտահան ըընենը դեռ շատ թարմ անցեալը և անվհատ առաջ երթանք դէ-պի մեր արդար և անհրաժեշտ պահանջներու իրակա-նցումը:

## ՍԻՓԱԿ

## ՆԱՄԱԿ ԴԵՐՁԱՆԻՑ

10 ապրիլ, 1900

Հազիւ հայ գիւղի մը մօտեցած և ահա մէկէն առջեղ կպարզուի սրտաձմիկ, աղէխարշ տեսարան մը: — Եկեղեցիները քանդուուծ, դպրոցները այրուած, հա-րիւրաւոր տներ կիսաբանդ, աւերակ գարձած. իսկ ան-դին կիսամերկ, բոկոտն, գունութափ հայ մանչ ու աղ-ջիկ, փորբիկ գառնուկներ, արեկն մէջք տուած: Դը-րան մը շէմքէ հազիւ ոտքը ներս դրած, հազիւ եկ-ւոր, օտարական հայի լուրը առած և ահա ամէն կողմ-է գլխիդ կլեցուին խեղճ գիւղացիներ՝ ծեր ու պա-ռաւ, հարս ու աղջիկ և մէկը լալով իւր որդու ողջ լլ-լալու մասին կհարցնէ, միւսը՝ իւր ամուսնուն, հօր ուր գտնուելուն... և ապա արտասուբի հեղեղ, լացի մըր-մունջ: Երբէք թշուառութիւնը, խեղճութիւնը այնպէս մուտք չէր գտեր հայու բնակարանին մէջ, ինչպէս հի-մա: Հայու լիցուն փեթակը, երկրի տուած առատ ա-ռատ բարիբուը ոչ մի տան մէջ չես կրնար տեսնալ: Մերկ, անօթի ժողովուրդ մը, կիսաւեր, հրկիզուած, կողոպտուած տուներու մէջ թառած, կծկուած: Կե-րածնին խաշած աւելուկ, աղ ալ չկայ որ վրան ցա-նեն ու այնպէս ուտեն: Եւ այս գրութիւնը լնդհա-նուր է ոչ թէ մէկ, այլ բոլոր գիւղերին: Շատ քիչ տուն կայ որ լծկաններ, կով, այծ ու ոչխար ունենայ: Եթէ կողոպտէն բան մը մնացեր էր, ան ալ կամ պարտատէն է խլեր, կամ կառավարութեան անխիղճ հարկահաններն են ծախեր: Քիւրդն ալ ամէն օր իւրեն հիրաւունքուը — հաց կուզէ, գարման ու խոռա կը պահանջէ. բայց որ չկայ, ուրտեղէ տան: — Քուրդը այդ չհասկնար և եթէ ոչինչ չկրնայ լնել, տան մէջ եղած հողէ ամանները կկոտրտէ: Հայու հացով ու ջը-րով մեծացած, յայտնի ոճքագործ Խալիլը, որու համար կոտորածէն առաջ հրաման էր ելեր զինքը բռնելու ու կախելու, այդ գազանը՝ որ կոտորածը սկսած ժամանակ կառավարութիւնը զինքը կանչեր և պաշտօն է ատացեր և նորէն քուրդերը հետը առած ամէն օր պաշտօն է ատացեր հայ գիւղերը կմտնէ և ամէն գիւղէ: Իւրեն համար կապահանդակ տուած:

Հայու օրեր մզկիթներու մէջ վազ (քարող) տը-ռուեր է այն բովանդակութեամբ, որ իսլամ եղողները քրիստոնեաներէ առևտուր չընեն: Թուրքերու մէջէն ալ այս մօտիկ ժամանակներս հայերուն առաջարկներ եղած են, ըսի լով թէ՝ մզկի ծախեցէր ձեր ունեցած կալուածները և հողերը, 100 ոսկիի արժողութեամբը 40 - 50 ոսկիի, եթէ չծախսէր, քիչ ատենէն պիտի ըս տիպուիր ամէն ինչ ձրի մզկի տալ: Կարծես թէ հա-

բոնի կառնէ, տուրք մը որ կառավարութեան տնվերջ  
տուրքերու ցանկէն զատ է: Կառավարութեան պաշ-  
տօնեաներն ալ հին հարկ, նոր հարկ, յաւելեալ հորկ  
խատութեամբ կհաւաքեն ու կհաւաքեն. իսկ այս թըշ-  
ուառ ժողովուրդը որ մէկին գոհացնէ, ուր տեղէն ճա-  
րէ, ինչ ընէ. Քանի որ չունէ, բայց ով է լսողը: Ե-  
թէ կեղեքումը այսպէս շարունակուի, ալ գժուար թէ  
հայ մնայ այս կողմերը: Խեղձ գիւղացիները ստիպուած  
են իրենց արտերը ծախելու ամենաշնչին գներով. իսկ  
վաշխառու թուրքերու ուզածն ալ այդ և շատերը  
իրենց տուն ու տեղէ զօհուելէ յետոյ, կզօհուին նուե  
իրենց քրտնաթոր աշխատանքով ձեռք բերած հողե-  
րէն ու գլոխը ծուած ասոր անոր միքապան կգառ-  
նան և հայ գիւղացի պրօլէտէրի թիւը այս կողմե-  
րը հազարաւորներ է: Այս գրութիւնը ունին՝ Խարիսին,  
Ժաղկարի, Վժան, Ղազաղ, Գըւնիկ, Բագառիմ, Կողեկ,  
Կոթեր, Լեռնակիրծ և ուրիշ շատեր: Զեմ կարծեր որ  
միւս գաւառներու վիճակը մենէ շատ տարբերի:

Պարզ է, Օսմանցին կուզէ երկիր մը առանց հայու և այդ քաղաքականութիւնը առաջ կտանէ ուղղակի և կողմանակի ամէն միջոցներով։ Խակ մէնք, մէնք ինչ կմտածենք. մէնք ինչ պիտի ընենք։ Լուս համգիսատես մը։

ՄԱՏԱԲ

ԶԵՅԹՈՒՆ

ՔԱՂԱՔԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՏՔԸ.

Օչյլթուն կտմ Ռւշիա գաւառն՝ իւր աշխարհա-  
դըրական գիրքով, իւր բարձր լեռներով, գետակնե-  
րով, հովիտներով, կիմայով, նոյնպէս իւր բնակիչ-  
ներով և վերջինիս հասարակական ներքին կեանքով  
բարորովին առանձնացած և կղզիացած մի երկիր է կազ-  
մում:

Արեմուտքի և հարաւի կողմերից այդ երկրի սեպաձեւ լեռներն, որոնք կանոնաւոր կերպով երար են կցուած պատիկ շղթաներով ու բլօակներով, անմիջապէս ընդհատում են խորխորատներով, նեղ կիրճներով, գետակներով և կամ՝ նախ փոքր և հետզհետէ մեծ գաշտերով։ Այդ շրջապատից գուրս զգալի կերպով փոխուում է նրա բարեխառն ու առողջասուն օդը՝ ջերմու, ձնչող և ապականուած մի օգի. այնտեղ վշում է հարաւային թունալից քամին՝ վոխանակ հիւսիսային զով սիւգի։ Պերիդից գեպի հիւսիս, աւելի հեռու լեռնաշղթաներն արագ-արագ ցածանալով ձգում, ընդարձակում են Ալբիստանի և Ուզուն-Եալայի գաշտագետինները։ Խոկ տրեելեան կողմից այդ երկրը կտրում է նշանաւոր և պատմական Պիւրամու կամ Ճիշան գետով։ Ճիշանը իւր գոյութիւնն աւնում է Փոքր-Ասիայի Խորեերից և իւր աւազանը ենթադրում է լինել Անտի-Տաւրոսի և Բին-Բուղայի բարձր լեռները, Ալբիստանի շուրջը աւելի մեծանալով և ծնունդ տալով Սէօկիստիւ գետակին աղմկալի յորձանիներով ու գահավէժներով նա իջնում է գեպից ած և անցնում Զէյթունից երեք ժամ հեռաւորութեամբ։

Աղջիացած աշխարհագրական դիրքով՝ սոյն լեռնա-  
յին երկիրը կազմում է մի նշանաւոր բարձրավանդակ  
Տաւրոսին և Ամանոսին լեռների մէջտեղ: Տաւրոս

և Հայ լեռների երկարածիգ շղթաները ձգուելով Միջ-  
երկրականի եղերներից և գրկելով Զուգուր և Ամրդ  
լնդարձակ ու բարեբեր դաշտերը՝ կանգ են առնում  
և կտրուեւմ արեւուտքից ու հարաւից, այդ բարձը-  
րավանդուկի շուրջը: Խսկ արեւելքից ու հիւսիսից ձի-  
հանի միջոցով կտրուած են Ալւըր - Դաղին, Ալե-  
շորը, Ազճէ - Դաղին, որոնք, որպէս մի շղթայի յա-  
ջորդական օղակներ, հետպհնետէ շարունակուելով և ձգ-  
ուելով դէպի Փոքր - Ասիայի խորքերը, կազմում են Ան-  
տի - Տաւրոսեան և Տէրսիմի Նշանաւոր լեռնաշղթաները:

Լեռնավանդակի ամենաբարձր գագաթը անուանվում է Պրիդ կամ Պերիդ՝ Զէյթունից դեպի հիւսիս, մօտաւորապէս, 8 ժամ հեռի և ծովի մակերևոյթից գրեթէ 3,600 ոտք բարձր։ Պերիդ արաբերէն բառ է և Նշանակում է “ցուրտ”։ Պերիդն այդ անունը հաւանականաբար ընդունել է հին ժամանակները՝ արաբական արշաւանքների և նոցա տիրապետութեան միջոցին՝ իւր ցուրտ և միշտ ձիւնապատ լինելու պատճառով։ Պերիդը յայտնի է իւր անմատչելի դիրքով, առողջ կիմայով և անուշ ու սառը ջրերով։ Այնտեղ գտնւում են բազմատեսակ որսի կենդանիներ, թռչուններ և ունի ճոխ բուսականութիւն՝ մատնացոյց եղած եւրոպական յայտնի բուսաբանների կողմեց։ Հենց այս է պատճառը, որ Պերիդը պաշտելի և նուիրական մի վայր է դարձել զէյթունցիների համար, ինչպէս պատմական Ոլիմպոսը Յոյների համար։ Տեղական աշուղները նուիրած են Պերիդի յիշատակին բազմաթիւ գովասանական երգեր և բանաստեղծութիւններ, որոնք մէկ առանձին հաճոյքով ու ինքնագոհութեամբ են երգւում նոյն տեղի ազգաբնակութեան կողմեց։ Այնտեղ գտնւում են ընտիր տեսակի հարուստ երկաթահանքեր, որոնք, մինչև 20-25 տարի առաջ գեռ, զէյթունցիների արդիւնաբերութեան և վաճառականութեան միակ աղբեկըն էին եղած։ Զէյթունցիները հըմուտ լինելով այդ արհեստին՝ արդիւնաբերում էին և՝ պատրաստելով երկրագործական ու տնային զանազան գործիքներ՝ արտածում էին մինչև հեռաւոր նահանգները։ Վերջին աարիներս, սակայն, եւրոպական երկաթի աժանութեան պատճառով անկարող են եղած մըցել եւրոպական շուկայի հետ և այդ պատճառով, անկարող լինելով շահագործել, ստիպուած՝ փակել են այդ ընդարձակ հանքերը։ Իրենց պէտքերի համար անգամ այժմ գործածում են եւրոպական երկաթը։ Պերիթը զէյթունցիների գլխաւոր եալլան (ամորանոցը) է։ Դաւարներն ու արջառները իրենց հետ առած, մայիսի մէջ, ժողովրդի մեծագոյն մասը բարձրանում է այնտեղ և վանների ներքե ապրում մինչև օգոստոսի վերջերը, երբ արդէն ցուրտը վրայ համնելով՝ հաւաքւում և վերադառնում են Զէյթուն։

Եթէ մարդ բարձրանալով զերիդի գագաթը դիտէ շուրջը, դեպի վայր, պիտի տեսնէ կանոնաւոր կերպով, տակաւ առ տակաւ, ցածացող բազմաթիւ լեռնագագաթներ և անմատչելի ապաւաժներ, օրոնցից ուժանք բոլորովին մերկ են, իսկ ումանք, ընդհակառակը, զարդարուած են վայրի մշղադալար ծառերով, թուփերով և ծաղիկներով։ Այդ գլխաւոր լեռներն են հետեւեալները. — Պերիդի արեմատեան և հիւսիսային կողքերը գտնւում են գանահիւ-Դաղի, Քոշ-Դաղի, Եէտի-Գարտաշշալար, որն ունի եօթը ցցուած սեպաձև, սրածայր գագաթներ, Սաղ-Տալը են. օրոնցից յետոյ շարունակութիւն են ստանում Կոկհանի

լեռները։ Արևմտից - հարաւ ձգւում են շաւտաբ, կարմիր - լեռ, չէօպէք, Տօլադ - Աղը են։ Արեւելեան և հարաւ - արեւելեան կողմերը՝ իւկէճ, Աթլըդ, Փրկիչ - լեռ, որոնց ստորոտը քերելով անցնում է Ճիշանը։ Խոկ դէպի հարաւ են զօգախ, Չըրադ, Աօլադ - Տէտէ և Պէրզինկայ, լեռները, որոնցից գոյանում է զէյթուն անունով գետակը։

Այն ընդարձակ և անմատչելի լեռներից ոմանք միացած են իրար հետ ապառաժային փոքրիկ օդակներով, իսկ ոմանք, պահելով իրենց մէջ խորը անդունդներ, դէմ առ դէմ ցցուած անհարժ կողքերով, սեպաձև բարձրանում են դէպի վեր։ Սոյն լեռների մէջ չկան շինուած կանոնաւոր ճանապարհներ, այլ միայն ողորապոյտ շատիզներն են, որ շարունակուում են դարւելոր հեղեղների թողած բնական արահետների միջով, կամ լեռների գագաթներից և կամ կողքերից, ուր մի փոքր անդուշութիւն բաւական է, որպէս զի ճամբորդ գլորուի և անհետանայ վիշերի մէջ։ Այդ լեռների միջից միայն երկու գլխաւոր ճանապարհներ են անցնում, որնք Զէյթունից Ալբիստան և Կոկիսոն են տանում իսկ ձմեռուայ ամիսներն առհասարակ անանցանելի են և երթեւեկութիւնը բոլորովին գաղրում։ Ալբիստան տանող ճանապարհն ունի նշանաւոր և պատմական մի Ղառւղ (կիրճ), ուր զէյթունցիները մի քանի տասնեակ կտրիճներով, նախկին կոիւների ժամանակ, քանից յաղթութիւններ են տարած հազարաւոր թշնամու վրայ։ Զէյթունից երեք ժամ հեռի դէպի հիւսիս, նեղ, քարուտ անցքերով, օձապոյտ ելեւէջներով սկսում է այդ Ղսուղը և տեսում երկու ժամց աւելի։ Նրա ստորոտից, դէմ առ դէմ կանգնած լեռների միջից, անցնում է Ճիշանը կատաղած յորձանքներով և խացնող գոռում գոչումով։ Ղսուղից ներս ճանապարհը մտնում է մի անգամ լեռների խորը, մութ ձորերի մէջ, ուր երկինքը հազիւ նշանարում է որպէս մի սպիտակ պատուածքը և երբեմն բարձրանում սարերի գագաթները։ Միայն սալմալը Զէյթունցին է, որ չախմախը հրացանն ուսին կախ ձգած, որպէս աներկիւղ և արագաշարժ եղնիկ, քարէ քար ցատկերով գնում, թոշում է, ուր կամենայ։

Զէյթունը քաղաքը հաստատուած է աշա այսպիսի անառիկ լեռների ծոցի մէջ, առցա հարաւային ըստորոշը, ծովի մակերեսից գրեթէ 2,800 ոտք բարձր մի եռանկիւնի ձորամիջն։

Զէյթունը գայմագամանիստ է, Մարաշի միւթէսարքութեան ներքեւ, այդ քաղաքի հիւսիսային արևմըեան կողմը և մօտաւորապէս 36 մզոն կամ 12 ժամ հեռի։ Նա ունի 1,500 տուն հայ բնակիչ և 30 տուն թիւքը. Քերջներս հայերէն ազատ խօսել գիտեն։

Քաղաքի կրգընը բարձրանում է սէ ապառաժներով փոքրիկ մի ամուր բերդ, որի շուրջը բոլորածեցած իշնող քարբարոտ զարիվայրերի երկարութեավայ, խիս կերպով, կարգ - կարգ և սանդիսի ձեռով շինուած են երդիբաւոր տները։ Բերդի գագաթը կան մի քանի տներ միայն, որոնք սեպհականութիւն են Միջնի թաղի իշնանների։ Ճանապարհները նեղ, անկանոն և անհարժ են. երբեմն փողոցներից անցնելու համար մարդ հարկադրում է մարդցել կամ քարից քար ցատքերով գնալ։

Քաղաքը երեք կողմերից բոլորովին կտրուած է երկու գետերով, որոնք բղիւնով հիւսիսային լեռներից ակսում են մին՝ արևմուտքից, երկրորդն՝ արևելքից

և սոսկալի խորութեամբ ձորեր բաց անելով քաղաքի շուրջը գելտա կազմած, իրար են միանում անմիջապէս քաղաքի հարաւային եղերը։ Գետակների վրայ երեք արքեր տեղեր ձգուած են փայտէ երեք հաստատուն կամութըներ, որոնցից զատ չկայ ո և է Ճանապարհ դրսի հետ յարաբերութիւն անելու համար։ Կամութըների միւս կողմերը շինուած էին բաւական տներ և հետզհետէ աւելանում էր նոցա թիւը, սակայն վերջին Ապստամբութեան ժամանակ զէյթունցիները իրենց ձեռքով ալբերցին այդ շէնքերը թշնամուն որ և է պատրսպարան չթողնելու համար։

Քաղաքի արևմտեան և հարաւ - արևմտեան կողմը, գետակի անմիջապէս միւս եղերը, տափակ կողքերով և միակտուր ու ժայռերով ձգուած է Սօլախ - Տէտէ լեռը՝ Զէյթունից մի քանի հարիւր մէթր բարձրութեամբ։ Իսկ հիւսիսային և արևմտեան կողմերը նոյնպէս միապաղաղ ժայռերով բոլորովին մերկ և հարժ գագաթով բարձրանում է Պէրզինկա լեռը Սօլախ - Տէտէ - ից աւելի բարձր զիբով և իւր կատարով դէպի քաղաքը թերուած ձեւն ընդունած, Պէրզինկան ունի երկու գլխաւոր գագաթներ, որոնցից մին կոչում է Քէրծէր (քար - ծալը) և գտնում է անմիջապէս Զէյթունի հիւսիսային կողմը, որի վրայ մի քանի տներ ևս շինուած են։

Պէրզինկա և Սօլախ - Տէտէ լեռներն, իրենց բարձրահայեաց գիբով երեք կողմերից — հիւսիս, արևելք, արևմուտքը — շրջապատում են Զէյթունը, որպէս բնական և անառիկ պարիսապներ։ Իրենց երկու ծալիերը բոլորակի կերպով հետզհետէ ցածրանում են և նեղանալով քաղաքի հարաւային կողմը։ Թողում են բաւական լայն և խորունկ մի լեռնաձոր, որտեղից անցնում են միացած գետակները փրփրերով և ահագին ազմուկ հանելով։

Զէյթունը բաժանուած է չորս թաղերի։ — Աերի կամ Եւնի - Տիւնեան երի թաղ, որը գտնուում է քաղաքի հիւսիսային կողմը քէրծէրի ստորոտը։ Միջնի կամ Սուրէնեան եան թաղ՝ որի մները ցրուած են բաղաքի կերպոնը, կամ բերդի շուրջը։ Բօղ Բայիր՝ քաղաքի հարաւային կողմը՝ զարիվայրի վրայ։ Հրորդը Կարկալար՝ քաղաքի հարաւ - արևմտեան կողմը։

ՀՐԱՅԵԱՑ - ՄԱՐՄԱ

### ԵՒՐՈՊԱՑԻ ԸՆԿԵՐՈՒՑԻՆ ԿԵՍՆՎԻՑ

Եթէ գերմանական սօցիալիստական կուսակցութիւնը ներկայացնում է մի ահագին մեքենայ՝ բաժանուած հազար ու մի մասերի, որոնք սակայն մի շտեսնը ու ակսուածքի սակայն շի կարելի ասել գրանցական սօցիալիստական կուսակցութեան մասին։

Ծնդգրկելով իւր մէջ մօտ երկու հազար բանական զանազան խմբեր, Ֆրանսիական սօցիալիստական կուսակցութիւնը իսկապէս կազմուած է Հինգ սօցիալիստական՝ քիչ թէ շատ՝ մեծ կուսակցութիւններից։ Չնայիլով որ գեռ անցեալ զեկտեմբերին Պարիզում տեղի ունեցաւ առաջին ընդհանուր համագումարը և Փրանսիական բոլոր սօցիալիստական կուսակցութիւնները ըստ հարաւային միութիւն սակայն ներկայում այդ միութիւնը տեղեւ պաշտօնական, աւելի անուանական է, քան թէ իրական։

Ճիշտ է, երբ մոռւթիւնը հրատարակուեց՝ միւնոյն ժամանակ որոշուեց, որ գոյսութիւն ունեցող սօցիալիստական հինգ կուսակցութիւնները, պահպաններով հանդերձ ներքին կազմակերպութիւնը, պէտք է կաղմէին իրենց ներկայացուցիչներից “կեդրոնական մասնախումբ”, որ պէտք է հսկէր Փրանսիական Պատգամաւորական ժողովում ներկայացուցիչ - սօցիալիստների ընթացքի վրայ և ամեն ջանք թափէր, որպէսզի նրանց գործունէութիւնը լինէր միաձայն, մի ուղղութեամբ և համապատասխան կուսակցութեան հիմնական կէտերին:

Սօցիալիստների միութիւնը պաշտօնապէս հրատարակուեց, կազմուեցաւ և Վենդրոնական մասնախումբը 52 ներկայացուցիչներից, բայց սօցիալիստական կուսակցութիւնների միութիւնը փաստորէն դեռ այժմ էլ դոյութիւն չունի:

Դեկտեմբերից մինչև այսօր Փրանսիական Պատգամաւորական ժողովում (որտեղ սօցիալիստ - կուսակցութիւնը ունի յիսունից աւելի ներկայացուցիչներ) չի անցել քիչ թէ շատ մի լուրջ խնդիր, որի մասին ժողովում գտնուող սօցիալիստները յայտնէին միւնոյն կարծիքը, ցոյց տային միւնոյն ուազմագիծը: Աւելի ևս — երբ վերջի ամիսներում հրատարակուեցան մի քանի նոր օրէնքներ, որոնք բանուորական օրուայ քանակութիւնն էին շօշափում — Փրանսիական սօցիալիզմը նորից կարծես միմեանց հակառակ բանակների բաժանուեց:

Հետաքրքրականն այն է, որ տարբեր ուազմագծերի կուսակցութիւնները կազմում են, այսպէս ասած, Հըները և Նորերը: Հները՝ “Մարքսիստները կամ հայլեկտիվիստները”, քսան տարուց ի վեց գործում են ֆըրանսիայում և իսկապէս ասած բանուորական կուսակցութեան առաջին և անձնուրաց կազմակերպիչներն են Եղել (Լաֆարդ, Գեդ, Վայեան). մինչեւ նորերը՝ “Անկախները” որոնց գործունէութեան ասպարէզ գուրս գալը հաղիւ 6-8 տարի է, բայց որը նոյնպէս եռանգուն գործիչ և որի մէջ կան նոյնպէս անզուգական մի քանի ոյժեր, ինչպէս օր. ժօրեսը:

Պարզ ըմբռնելու համար Ֆրանսիաիան սօցիալիստների հայեացների տարբերութիւնը, մեզ անհրաժեշտ է ասել մի քանի խօսք այն հասարակական երեսիթներին, որոնց առիթով և սկսուել է Փրանսիական սօցիալիստների տարբեր ուազմագիծը:

Մօտ մի տարի սրանից առաջ, երբ դեռ չարաբաստիկ Դրէյֆուսի գործի օրերում Փրանսիան մի տեսակ տեսնդու և ջղային դրութեան մէջ էր գտնուում — բուրժուայ Հանրապետական կուսակցութիւնը (Պատեհականները և “Արմատականները”) պարզորէն տեսան, որ “Միապետական” կուսակցութիւնը ահագին դաւագրութիւն է կազմել և պատրաստում է Փրանսիայի ներկայ հանրապետական կարգերը փոխարինել միապետական կարգերով:

Եւ ահա բուրժուայ Հանրապետական կուսակցութիւնը, որքան էլ մինչև այդ օրը սօցիալիստների թըրժնամին լինէր, որքան էլ սօցիալիզմի բարոյական ոյժը արհամարհող ձեւանոր, բայց և այնպէս հարկադրուեցաւ ինքը առաջինը իւր ձեռքը մեկնել սօցիալիստական կուսակցութեան և ինդրել, որ իրեն օգնեն “ընդհանուր” թշնամուն՝ միապետական - կղերական դաւագրութեան զէմ:

Հանրապետականները շատ լաւ գիտէին որ սօցիալիստական կուսակցութիւնը միշտ ջատագով է եղել

քաղաքական ազատութեան, հետեւապէս նա երբէք չի թողնի, որ արդէն գոյութիւն ունեցող քաղաքական ազատութիւնը (խօսքի, մամուլի, համոզմանքի ևն.) փոխարինուի որևէ միապետական բոնաւ պետական կարգերով: Սօցիալիստական կուսակցութիւնը քաղաքական ազատութեան վրայ միշտ նայել է իրեր մի անհամեշտ միջոցի վրայ, որի բոված միայն անցնելով կարելի է պատրաստել ապագայի իդէալին հասնելու ճանապարհը: Որքան որ գոյութիւն ունեցող քաղաքական ազատութիւնը բաւարար չի էր, այնուամենային նա տայիս էր Փրանսիական բանուորներին այն անհամեշտ միջոցները, որով բանուորը կարող էր կուսակցութիւնը գանձնել (կապիտալիստ բուրժուազիայի) գէմ: Այս բոլորը բուրժուայ հանրապետականները շատ լաւ հասկցել էին և ահա թէ ինչո՞ւ անսնելով սօցիալիզմի ոյժը, խնդրեցին սօց. կուսակցութիւնից օգնել իրենց և ժամանակաւորապէս միացած ոյժերով ջախջախնել միապետական - կղերական դաւագրութիւնը:

Վակայն միւնոյն ժամանակ բուրժուայ Հանրապետական կուսակցութիւնը շատ լաւ գիտէր, որ եթէ պատգամաւորական ժողովում գտնուող յիսունից աւելի սօցիալիստական ձայնները իրան օգնեին, ինքն էլ ստիպուած էր նրանց մի քանի պահանջներին գոհացում տալու: Բայց սօցիալիստների պահանջները միշտ եղել են յանուն և յօգուտ բանուոր դասակարգի շահերին և հետեւապէս ուղղուած ընդդէմ բուրժուազիայի տնտեսական առանձնաշնորհումներին: Դրութիւնը այնպէս էր խճճուած, որ Հանրապետական կուսակցութիւնը մի կողմից ուղղում էր սօցիալիստների օգնութիւնը, միւս կողմից և չէր ուղղում գնալ ընդդէմ բուրժուազական շահերին: Եւ ահա տեղի է ունենում մի շատ սրամիտ և միշէ այդ ժամանակ դեռ չտեսնուած քաղաքական երեսիմ: Կազմում է մի նոր կառավարութիւն հանրապետական անդամներից, որի մի անդամը սակայն լինում է սօցիալիստ. յայտնի սօցիալիստ Միլըրանը նըշանակում է կառավարութեան անդամ - նախարար:

Չի կարելի ի հարկէ ասել, որ Միլըրանի նախարար դառնալու օրից միայն տեղի ունեցաւ Փրանսիական սօցիալիստների երկու տարբեր ընթացքը, քանի որ դեռ Դրէյֆուսի գործի միջոցն “Անկախները” կուսակցութիւնը միշամտում էր արդարադատութեան գործի մէջ, մինչդեռ Կոլեկտիվիստները (Հաւաքականներ) չէզոք դեր էին խաղում Դրէյֆուսի երեսիմ: Սակայն “Միլըրանի գէպիքից” յետոյ “Կոլեկտիվիստն” կուսակցութեան և “Անկախներնի” մէջ եղած տարբերութիւնը ակնյայտնի եղաւ ամենը համար:

Մի կողմից Կոլեկտիվիստները պերճաբանորէն ապացուցանում էին, որ հէնց սօցիալիստական գաղափարը և նրա սկզբունքները թոյլ չեն տալիս, որ մի սօցիալիստ դառնայ անդամ այնպիսի կասավորութեան, որ ամբողջովին բուրժուազական է իւր հայեացքներով և որը ընելով կապիտալիստ դասակարգի ներկայացուցիչ, պէտք է որ ինքն էլ հակառակ լինի բանուոր դասակարգի ձգտումներին. ինչպէս ուրեմն մէկ այդպիսի նախարարութեան անդամ կ'որոշ էլ լինել մի սօցիալիստ, որի կոչումն է պաշտպանել բանուոր դասակարգի շահերը. չէ որ այդ սօցիալիստ նախարարի նըշանակը ու կոռու միջոցները բոլորովին հակառակ են իւր լինկերների՝ միւս նախարարների նպատակին ու միջոցներին: Բացի այդ այնպէս կարելի է եղել յիսչպէս կարելի է եղել:

և ուրախանալ՝ ասում էին կօլեկտիվստները, որ մի սօցիալիստ նախարար է նշանակուած, քանի որ նա մենակ ինչ որ էլ կամենայ անել յօդուտ բանուոր գասակարգին,—ոչինչ չի պիտի կարողանայ անել, այն պարզ պատճառով, որ միւս նախարարները երբեք չեն համաձայնի նրա հետ. մինչդեռ մի սօցիալիստի նախարար դառնալովը—բանուոր դասակարգն էլ սկզբում մեծ յոյսեր տածելով, յիտոյ անհրաժեշտօրէն հիալաթափուած, կտեսնէ, որ իւր ներկայացուցիչները կառավարութեան մէջ լինելով հանդերձ իւր դրութիւնը միւնոյնն է մնում:

Ա՞ռ կողմից այսպէս էին նայում և նախարարին հար-  
ցի վրայ:

Սիւս կողմից, “Անկախ” կոչուած սօցիալիստները ամեն ձիգ ու ջանք էին թափում իրենց ընկերներին համոզելու համար, որ ներկայ քաղաքական գէպերը պահանջում են այդ ռազմագիծը, որ գոյութիւն ունեցող քաղաքական կարգերը պահպանելու նպատակով, անհրաժեշտ է բուրժուայ հանրապետական կառավարութեան օգնել, նրան բարոյապէս պաշտպանել, ի գէպս և միանալ նրա հետ, գառնալ կառավարութեան անդամ ընդդէմ միապետական դաւադրութեան, որպէս քաղաքական ազատութեան խորտակողների գէմ Այդ հարցը, որ պէտք է վերջնականացնապէս վճռուած համարուեր գեկտեմբերի առաջին համագումարի մէջ — իսկապէս կիսատ կերպով վճռուեց. քանի որ վճիռը սկը-զ բռնքների տեսակետից էր արուած ուստի և ոչ մի իսկական նշանակութիւն ունեցաւ: Առում ենք որ այդ խնդիրը չվճռուեց, որովհետեւ հենց մինչև այժմ էլ այդ հարցը զանազան թիւրիմացութիւնների պատճառ է դառնում, և որից առաջացած տարբեր կարծիքները ժամանակ առ ժամանակ շատ սուր էերպարանք են ստանում որը և վնասում է ընդհանուր սօցիալիստական գործին:

Ոստիկ ապագան, մանաւանդ երբ ներկայ կառավարութիւնը, որի մէկ անտամը սօցիալիստ է, ընկնի և մի այլ հանրապետական կառավալարութիւն նշանակուի մեջ ցոյց կտայ, թէ որքան մի սօցիալիստի նախարար լինելուց օգուտ կամ վեստ ստացու բանուոր դասակարգը և սօցիալիստական գործը առհասարակ։ Այս բարդ խնդրի մէջ, մի բան սակայն շատ ընորոշ է և արժանի ուշադրութեան, որ մի սօցիալիստի նախարար գառնալու խնդրիը պաշտպանողները («Անկախները») առաջ բերին գործունէութեան մի շարք նոր ձևեր, որոնք, ինչպէս առաջինը, միւս սօցիալիստների գործունէութիւններից տարբեր է։ Սօցիալիստական պերսոպագանդայի այդ նոր ձևերը եթէ մինչեւ վերջին ժամանակներս չէին գործած լում և միայն ներկայումը են ծնունդ առնում՝ ըստ ամենայնի նրանք ունենիր ենց դոյութեան իմաստը։ Ինքն ըստ ինքեան բնական է և հասկանալի, որ երբ ժամանակները այնքան փոխուել են, որ կեանքի կողմից նոր պահանջներ են լինում՝ պէտք է որ յայտնի քաղաքական կուսակցութիւնն էլ գործէ ըստ ժամանակի պահանջին։ Այն՝ ինչ սրանից 5-10 տարի առաջ պիտանի էր ճանչցուող կամ անհրաժեշտ։ Ներկայում կարող է լինիլ ոչ թէ միայն անպէտք, այլ շատ անգամ և մեսասկառ։

Ահա հենց այս սկզբունքն է, որով և տռաջնորդ-  
ուում է Փրանսիական սօցիալիստների “Անկախ” կոչ  
ուած մասր:

Խակ թէ ինչո՞ւմն է զլսաւորապէս նրա գործունէ-ութեան տարբերութիւնը Փոանսիական միւս առեւ հերթ հերթ

և աւելի մեծ բանուղրական կուսակցութեան գործունէութիւնից — այդ մասին կասենք միայն մի քանի խօսք:

“Ալլեկտիվաստ” ների կուսակցութիւնը բանուոր գա-  
սակարգից զատ ոչ մի ուրիշ դասակարգի հետ չի ու-  
ղում միանալ և գործել. նրա գործունեութիւնը զուտ  
քաղաքական - սօցիալիստական հողի վրայ է, ըստ որում  
նրա նպատակն է ընտրութիւնների միջոցով հասնել  
այն մեծամասնութեան, որը և առնում է իւր ձեռքը  
քաղաքական ղեկը. իսկ քաղաքական ղեկը ձեռք առ-  
նելով՝ նրան արդէն շատ հեշտ է դառնում Խոշը ը  
սեպհականութեան և արդիւնագործութեան միջցները  
դարձնել ազգային, “հաւաքական” սեպհականութեւն:  
Այնուառ Անկախ ները համաձայնուելով հան-

դերձ այդ ծրագրի հետ, իրենց գործունեութիւնը տարածում են հասարակութեան և միւս խաւերի վրայ. ինչպէս օր. գիտնականների, արուեստագէտների, և առհաստարակ մտաւոր, կամ ինտելլիգէնտ կոչուած շըրջանների վրայ էլ: Համոզուած, որ կարելի է և անհրաժեշտ՝ յօդուտ սօցիալիստական գաղափարին՝ օգտուել ամեն մի դէպքից, նա չի արհամարհում այն և աշխատում օգտուել ներկայացած ամեն, նոյն իսկ ամենափոքր միջցներից, որոնցով որ առիթ կներկայանայ սօցիալիստական պրօպագանդան առաջ տանել, բացի այդ, տեսնելով որ սօցիալիզմը քանի գնում ընդգրկում է կեանքի գրեթէ բոլոր կողմերը, նոյնքան տնտեսական, որքան և մտաւոր ու բարոյական, նա վճռել է հէնց այժմեանից ներկայ կտպիտալիստական կազմակերպութեան մէջ պատրաստել բանուորական միութիւններ (syndicat և cooperation). այդ տնտեսական միութիւնները՝ “Անկախ”, սօցիալիստական կուսակցութեան համոզմունքով՝ մեծ կրթիչ և պատրաստի ոյժ պիտի լինին ապագայ սօցիալիստական կողմակերպութեան նկատմամբ: “Անկախ”, կուսակցութիւնը ուզում է ամեն հասարակական երեսոյթի առիթով յայտնել և բացառի իւր ուցի աչ և ստական հայեացները ու միջցները. լինի գեղարվեստը, լինի գիտութիւնը, լինի գինուորականութիւնը կամ կղերականութիւնը — նա պատրաստ է և արդէն անում է իւր սօցիալիստական պրօպագանդան:

Անշուշտ, ընթերցողը տեսնում է, որ Փրանսիական սօցիալիստների մի մասի այսպիսի լայն գործունեութեան ծրագիրը, համակրելի լինելով հանդերձ, կարող է ունենալ և իւր բացասական հետեանքները. այդպէս՝ օր ոյժերը կարող են ջլատուիլ, կարող են բազմաթիւ «սուտ և կեղծ» սօցիալիստներ նրանց հետ գործել և ընդհանուր գործին վնասել, կարող են բռնգարական կոռուփ վրայ անհրաժեշտ ուշադրութիւն չը դանձնել և այլին. բայց և այնպէս գործունեութեան նոյն այս լայն ծաւալը մեկ անգամ ընդ միշա ցոյց է տալիս (և միայն կոյրերը չեն տեսնում), թէ որբան սօցիալիստական գաղափարը պահանջ է գարձել Փրանսիայում, թէ ինչ աստիճանի սօցիալիզմը մի ոյժ, մի անհրաժեշտութիւն է դառնում Փրանսիայի բազմակողմանի և աղմկալից հասարակական կեանքի համար, և ինչ արտգընթաց քայլերով նոր դիմում է գէպի առաջ:

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ  
և գրամ ու մանդատ ուղարկել հետեւեալ հասցեով. —  
M. Lambert. — 85, Peckham Rye

London S.E. [Angleterre]